ՈՐՈՇՈՒՄ
ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

քաղ. Երևան 4 նոյեմբերի 2009թ.

Հայաստանի Հանրապետության Սահմանադրական դատարանի 2-րդ դատական կազմը

Նախագահությամբ՝ Հ. Դանիելյանի

Անդամակցությամբ՝ Ֆ. Թոխյանի

Մ. Թոփուզյանի

Քննության առնելով ՀՀ քաղաքացի Ռուբեն Թորոսյանի դիմումի ընդունելիության հարցը

ՊԱՐԶԵՑ

Քաղ. Ռուբեն Թորոսյանը դիմել է Սահմանադրական դատարան, վիճարկելով ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 125 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը:

2-րդ դատական կազմը գտավ, որ ներկայացված դիմումը ենթակա է մերժման «Սահմանադրական դատարանի մասին» ՀՀ օրենքի 69 հոդվածի 7-րդ մասի պահանջներից ելնելով, որի համաձայն՝ անձը համապատասխան պահանջով Սահմանադրական դատարան կարող է դիմել միայն այն դեպքում, երբ սպառվել են դատական պաշտպանության բոլոր միջոցները: Տվյալ դեպքում դիմումին կից ՀՀ Վճռաբեկ դատարանի համապատասխան ակտը չի վկայում դիմողի կողմից դատական պաշտպանության բոլոր միջոցները սպառած լինելու հանգամանքը, քանզի դիմողը կարող է կրկին դիմել ՀՀ Վճռաբեկ դատարան՝ միջնորդելով վերականգնել բողոք բերելու բաց թողած ժամկետը:

Ղեկավարվելով Սահմանադրական դատարանի մասին օրենքի 69 հոդվածի 6 կետով, Սահմանադրական դատարանի 2-րդ կազմը

ՈՐՈՇԵՑ

Քաղ. Ռուբեն Թորոսյանի դիմումը՝ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 125 հոդվածի 4-րդ մասի սահմանադրականությունը վիճարկելու մասին, մերժել:

Նախագահող՝

Անդամներ՝

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ ՔԱՐՏՈՒՂԱՐ ՐՈՒԹՑՈՒՆ